«Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում» ծրագրի շրջանակներում փորձագետներ ներգրավելու հայտարարություն

1. Սույնով հայտարարվում է «Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման մոնիթորինգի իրականացում և գնահատում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակերում 6-ամսյա ժամկետով փորձագետներ ներգրավելու համար փաստաթղթերի ընդունելություն:

2. Փորձագետի պարտականություններն են՝

1) իրականացնել Հայաստանում ներդրված պրոբացիոն ծառայության օրենսդրական դաշտի, ինչպես նաև գործնականում դրա կիրարկման գործընթացի մոնիթորինգ,

2) իրականացնել մոնիթորինգի արդյունքների վերլուծություն և գնահատում,

3) իրականացնել ոլորտի միջազգային չափանիշների և առաջադեմ փորձի ուսումնասիրություն,

4) կատարված ուսումնասիրությունների արդյունքում կազմել Հայաստանում պրոբացիոն համակարգի ներդրման և զարգացման վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցը, որը կպարունակի թե՛ օրենսդրական, և թե՛ իրավակիրառ պրակտիկայի բարելավմանն ուղղված առաջարկություններ՝ հասցեագրված իրավասու պետական մարմիններին,

5) ներկայացնել հատուկ զեկույցն ու դրանում տեղ գտած առաջարկությունները զեկույցի ներկայացմանը նվիրված միջոցառման ընթացքում:

3. Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

1) իրավաբանական բարձրագույն մասնագիտական կրթություն,

2) իրավագիտության ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ,

3) պրոբացիոն ոլորտի ներպետական օրենսդրության և միջազգային չափանիշների գերազանց տիրապետում,

4) հայերեն և անգլերեն լեզուների գերազանց իմացություն,

5) բարոյական բարձր հատկանիշներ և մասնագիտական բարձր հեղինակություն:

4. Փորձագետի հավակնորդը պետք է սույն հայտարարությունը հրապարակելուց հետո 30 օրյա ժամկետում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի քարտուղարությանը ներկայացնի՝

1) գրավոր դիմում,

2) ինքնակենսագրական (CV),

3) անձը հաստատող փաստաթղթի պատճեն,

4) 3x4 սմ չափի երկու լուսանկար,

5) սույն հայտարարության 3-րդ ենթակետով սահմանված պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթեր,
6) առնվազն երկու երաշխավորագիր-նամակ հավակնորդի մասնագիտական գիտելիքների, աշխատանքային ունակությունների և բարոյական հատկանիշների վերաբերյալ:

5. Սույն հայտարարությամբ սահմանված չափանիշների գնահատման և հավակնորդների հետ իրականացված հարցազրույցի արդյունքներով Պաշտպանն ընտրում է Ծրագրի փորձագետներ:

6. Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է սույն թվականի փետրվարի 9-ը: Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Միջազգային համագործակցության վարչության հետ +374 10 538842 հեռախոսահամարով: